# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

### Հարստահարութիւններ եւ սպանութիւններ Տաճկաստանի հայաբնակ գաւառներում:

Գաւառներում հայերի նեղսակիր վիճակը եւ նրանց դէմ գործուած բռնութիւններն ու սպանութիւնները Ներքին գործերի նախարարին յայտնելու համար հոգեւորականներից եւ աշխարհականներից կազմուած մի պատգամաւորութիւն է ներկայացել Բարձրագոյն դուռը։ Ներքին գործոց Նախարար Նեճմէդդին բէյը պատգամաւորութեան լսելուց յետոյ առաջարկել է որ դիմումն գրաւոր –թագրիրով լինի, հաւաստիացնելով միանգամայն որ գաւառական պաշտօնեաների մէջ կարեւոր փոփոխութիւններ պէտք է լինեն, նոր միջոցներ պէտք է ձեռք առնուեն անդորրութիւնը տեւական դարձնելու համար. Բաղէշի կուսակալին կառավարութեան կողմից տրուած հրահանգների հետեւանքով ոճրագործ աւազակները ձերբակալելու համար ամեն միջոց գործադրւում է. նրանց դրդիչներից մէկը, ինչպէս նաեւ մի խումբ աւազակներ բռնուած են, եւ եթէ պէտք լինի, նորից պէտք է զինուորներ ուղարկուեն ոճրագործներին ձերբակալելու համար։ Նախարարը դիտել է տուել, որ պատգամաւորութեան միջոցով խմբովին եղած այս տեսակ դիմումները տարբեր մեկնութիւններ կարող են ստանալ. ազգը պէտք է վստահ լինի կենտրոնի կառավարութեան վերայ։

### Տ. Մուշեղ եպիսկոպոսի առաջնորդութեան խնդիրը.

Կրօնական ժողովը նկատելով, որ Ամերիկան ամենայն Հայոց Հայրապետի տէրունի վիճակ է, որոշել է Ամերիկայի Հայոց առաջնորդութեան մասին տեղեկութիւնները

հաղորդել կաթուղիկոսական Տ. Տեղակալին կարգադրելու համար։ Միևնոյն ժամանակ որոշել է գրել Սսի Սրբազան կաթուղիկոսին, որ Տ. Մուշեղ եպիսկոպոսին, որպէս Սսոյ եպիսկոպոսի, հրաւիրի Կիլիկեան վիճակների մէջ պաշտօնավարելու։ Այս կարգադրութիւնը հաղորդուած է Տ. Մուշեղ եպիսկոպոսին և Ամերիկայի առաջնորդական փոխանորդին։

### Քրիստոնեաների հողերի բռնի յափշտակութիւն.

*Հողային խնդրի առիթով յոյն և հայ պատրիարքարանները միացեալ դիմում պէտք է անեն կառավարութեան, խնդրելով քրիստոնեաների դէմ գործող հողային զրկանքներին վերջ տալ։*

### Յունիսի 10-ի Ազգ. Երեսփոխ. ժողովի նիստը.

*Շատ աղմկալից է եղել այդ ժողովը։ Մի կողմ թողնելով աղմուկի առիթ տուող խնդիրները, ասենք, որ հարստահարութիւնների պատճառով եղած մի քանի բանաձևներից Ազգ. երեսփոխանական ժողովը քուէների առաւելութեամբ ընդունեց հետևեալը.*

*«Ազգային ժողովը իր խորունկ ցաւը կը յայտնէ վերջին ամիսներուն Հայաստանի և միւս հայաբնակ նահանգներու մէջ տեղի ունեցող սիստեմաթիք ջարդերու, հարստահարութիւններու, խոշտանգումներու և բռնի իսլամացումներու առթիւ։ Կառաջարկէ Քաղաք. ժողովին անյապաղ ուսումնասիրել և ներկայացնել իրեն՝ առաջիկայ նիստին՝ այն միջոցները, որոնց կիրառումով կարելի է վերջացնել թրքահայ ժողովրդի արդի տագնապալից կացութիւնը, որպէս զի Ազգ. ժողովն ալ կարենայ որոշել և ճշտել կառավարութեան քով կատարուելիք դիմումներուն եղանակը»։*

### Տեսուչ խորհուրդների եւ հոգաբարձութիւնների կազմակերպութիւնը։

*Յունիսի 10-ին Քաղաք. ժողովը կազմակերպեց տե-*

տուչ խորհուրդներն ու հոգաբարձութիւնները ըստ այսմ.

Ա. Ուսումնական խորհուրդ.—

Տեարք—1. Պետրոս Հալաճեան, 2. Հայկ Խոճասարեան, 3 Լեւոն Մեզպուրեան, 4. Յովսէփ Նուսուֆեան, 5. Յովհաննէս Յակոբեան. 6. Ստեփան Կուրտիկեան և 7. Տոքթ. Գառնիկ Կիւլպէնկեան.

Բ. Տնտեսական Խորհուրդ.—

Տեարք—1. Ստեփան Գարայեան, 2. Ստեփան Թէլքեան, 3. Եդուարդ Շիրինեան, 4. Յակոբ Ունճեան, 5. Խաչիկ Սվաճեան, 6. Օննիկ Տէրունեան և 7. Վռամշապուհ Մանուկեան.

Ելեւմտից հոգաբարձութիւն.—

Տեարք—1. Լեւոն Սաաթճեան, 2. Արամ Թագւորեան, 3. Վահրամ Պօյաճեան, 4. Յովհաննէս Գարայեան, 5. Մագսուտ Նազլեան, 6. Գարեգին Տէմիրճիպաշեան, և 7. Սարգիս Սուքին.

Դ. Հիւանդանոցի հոգաբարձութիւն.—

Տեարք—1. Բարսեղ Աւետիսեան, 2. Կ. Խանճեան, 3. Ն. Օհանեան, 4. Յարութիւն Սելեան, 5. Յովակիմ Աբիկեան, 6. Տոքթ. Գր. Ճէլալեան, 7. Տոքթ. Գրիգոր Ֆնտգլեան, 8. Մաքսուտ Շահզադ. և 9. Անտօն Թարագ.

Ե. Դատաստանական խորհուրդ.—

Տեարք—1. Արիստ. Հիսարլեան, 2. Զարմայր Կէզուրեան. 3. Խորէն Յարութիւնեան, 4. Տաճատ Փաշայեան քահանաները, 5. Համբարձում Պօյաճեան, 6. Տոքթ. Կարապետ Մութաֆեան, 7. Սարգիս Գարագոշ, և 8. Սարգիս էսմէրեանց էֆէնդիները:

---

## ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Դժգոհութիւն հայ կաթոլիկ. պատրիարք Թերզեանի դէմ

Յունիսի 12-ին Կ. պոլսոյ հայ կաթոլիկ եկեղեցիների մէջ պէտք է կարդացուէր նրանց պատրիարք-կաթողիկոս

Թերզեանի կոնդակը։ Սակայն ժողովուրդը ամեն տեղ աղմկել է և թոյլ չէ տուել ընթերցումը։ Այս կոնդակով Թերզեանը պահանջում է, որ ոչ Երեսփ.—ժողով, ոչ Վարչութիւն, և ոչ Հոգաբարձութիւն ունենայ ազգը, այլ ամէն գործ կղերը մատակարարէ, կղերը վարէ, ու ժողովուրդը մենակ դրամը տայ, դրամ՝ հասցնէ, բայց երբեք հաշիւ չպահանջէ» (Բիւզ. 13 յունիս)։

Թերզեան Սրբազանի կոնդակի ընթերցման առթիւ աղմուկներ Կարինում էլ են եղել. ընդհատուել է կոնդակի ընթերցումը։ Այդ կոնդակի բովանդակութիւնը «Յառաջ» լրագրից առնելով այսպէս է առաջ բերում «Բիւզանդիոնը» (յունիս 14)։

«Ժողովուրդը ձայն չունի բնաւ առաջնորդ եպիսկոպոսի ընտրութեան գործին մէջ. մեր Ազգ. Երեսփ. Ժողովին նպատակն է անկրօնութիւն ստեղծել և Նոր Բողոքական եկեղեցի մը հաստատել ընդդէմ կաթոլիկ ուղղափառ եկեղեցիին»։

Կարինոյ հայ կաթոլիկ ժողովուրդը դժգոհ է առաջնորդ Բչուրեան եպիսկոպոսից, որին հովանաւորում են հակառակ ժողովրդի ցանկութեան Վատիկանն ու պատրիարքարանը։

# ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

## ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

### Գիւղատնտեսական պարապմունքներ եկեղ.-ծխական դպրոցներում.

Ռուս լրագրերը հաղորդում են, որ Ռուս Սրբ. Սինոդի նախկին օբեր-պրօկուրօր Ս. Մ. Լուկիանովը առաջարկել էր նախարարների խորհրդին մի օրինագիծ ծխական դպրոցներում գիւղատնտեսական պարապմունքներ սահմանելու համար 1912 թուին հետեւեալ գումարները յատ-